ՄՈՍԿՎԱՅԻ Մ.Վ.ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԿԻՑ Ա.Հ.ԵՐԻՑՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ГИМНАЗИЯ ИМЕНИ А.Г.ЕРИЦЯНА ПРИ ФИЛИАЛЕ МОСКОВСКОГО
ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ М.В.ЛОМОНОСОВА

✉ ՀՀ, ք. Երևան, 0070, Վարդանանց 17շ. ☎ +374 11 900111 (114) Email: School@msu.am

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԹԵՍՏԻ ՆՄՈՒՇՕՐԻՆԱԿ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ (IX դասարան)

ՀԱՐԳԵԼԻ ՛ԱՇԱԿԵՐՏ

Ընդունելության թեստը բաղկացած է 10 առաջադրանքից, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է 5միավոր(ընդամենը՝ 50 միավոր):

Խնդրում ենք ուշադիր կարդալ առաջադրանքները, գրել հստակ, առանց ջնջումների:

Առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 60րոպե:

ՄԱՂԹՈՒՄ ԵՆՔ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ1.Լրացնել բաց թողած տառերը.

Աման__բյա, ան__թի, զուգ__թաց, մեղմ_բոր, անդրավարտի__, ուղեկորույ__, փղ__կալ, անխա_ան, գրգի__, անցուդար__:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2. Արտագրել՝մեծատառը թողնելով ըստ անհրաժեշտության.

ԴԵՂԻՆ ԾՈՎ, ՆՈՐ ՆՈՐՔ, ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՄԵԾ ՄԱՍԻՍ, ՇԱՊՈՒՀ ԵՐԿՐՈՐԴ, ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ՄԽԻԹԱՐ ՍՊԱՐԱՊԵՏ, ՍԱՀԱԿ ՍԵՎԱԴԱ, ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ, ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏ, ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, ՄՈՎՍԵՍ ԿԱՂԱՆԿԱՏՎԱՑԻ։

_____

_____

_____

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3. Յուրաքանչյուր սյունակից ընտրելով մեկական նախածանց և արմատ՝ կազմել վեց ածանցավոր բառ.

ան	ծանրաձող
ապ/ա/	օդորակիչ
դժ	հասունություն
տ	զոհունակություն
արտ/ա/	բարեբախտաբար
գեր	սահմանամերձ

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 4. Գրել դարձվածքների իմաստները.

ա/ նոթերը կիտել _____

բ/ բախտի բերմամբ_____

գ/ մուրազը փորը մնալ_____

դ/ պոչը կտրել_____

ե/ ջրի պես_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 5. Դուրս գրել գոյականները.

Նա էլ ճաշակեց գյուղի անարատ բարիքներից, և մենք, խորին շնորհակալություն հայտնելով, հրաժեշտ տվեցինք բարի ու հյուրասեր մարդկանց։ Ճանապարհ ընկանք՝ տեսնելու քաղաքի աղմկոտ փողոցները, բարձրահարկ շենքերը և մարդաշատ հրապարակները։

_____

_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 6. Կազմել տրված գոյականների հոգնակին.

ուղի_____

զորք_____

դուռ_____

նստացույց_____
վիրաբույժ_____
ձեռագիր _____
սպասասրահ _____
հացատուն _____
քույր_____
տղամարդ_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Որոշել նշված բայերի *եղանակը, ժամանակաձևը, դեմքը, թիվը, սեռը.*
Հասնելու եմ _____
կմոտենա_____
հանդիպեցինք_____
մտածի՛ր_____
ժպտար_____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Ընդգծել կապերը.

ա/ Սառնաղբյուրից ներքև՝ քարերի վրա, զրնգացին ծանր պայտերը:

բ/ Գյուղից ներքև՝ մի բարձր ժայռի մոտ, գետը փոխում է հունը :

գ/ Վագրը ոստյունից առաջ պահում է շունչը և կպչում գետնին:

դ/ Երկու շաբաթ հետո իմ երեսունյոթ աշակերտներին անունով էի ճանաչում:

ե/ Ալիքներն իրենց հետ տանում էին չոր ճյուղերի փշուրները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Կատարել շարահյուսական վերլուծություն.

ա/ ընդգծել բաղադրյալ ստորոգյալը.

Նրանց պատմությունների մեծ մասը վայրի գազանների նասին է:

բ/ ընդգծել որոշիչը.

Այդ օրինակելի երիտասարդը ուղիղ ճանապարհի վրա է՝ շնորհիվ իր հրաշալի ծնողների:

գ/ ընդգծել ուղիղ խնդիրը.

Լիալուսինը վերևից կաթնագույն լույս է սփռում:

դ/ ընդգծել ձևի պարագան.

Քամուց հնձանի դռնակը մեղմորեն ճռնչում էր, և մաշված դուռը դողդոջ երգում էր մի հին երգ:

ե/ ընդգծել հատկացուցիչը.

Դեղնավուն արեգակը, ինչպես արյունով լցված մի աչք, սրթսրթում էր ամպերի կեղտագույն կարկատանների մեջ:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Կազմել նախադասություն՝ չխախտելով տրված բառերի շարադասությունը:

ա/ Նավթ, մեծ, պաշար, հայտնաբերվել, Վան, և, Կարս, մոտակայք:

_____

_____

բ/ Ջուր, մակարդակ, իջեցում, հետո, Սևան, մակերես, ամեն, տարի, ձմեռ, սառցակալել:

_____

_____

գ/ Դպրոց, միջնադարյան, մատենագիր, երկ, ծանոթանալ, խիստ, թռուցիկ, կերպ:

_____

_____

դ/ Երրորդ, ձիավոր, հնագետ, պայուսակ, պահածո, հանել:

_____

_____

ե/ Հայաստան, գետ, մի, մաս, ստորին, հոսանք, ամառ, ցամաքել:

_____

_____

_____